մօտ։ Օլթին եւս 105 կիլոմետր երկայնութիւն ունի ակունքից մինչեւ խառնունքը։

Ճորոխն ընդունելով միացեալ վտակները, կրկնապատկւում է ջրով եւ հոսում ուղիղ դէպի հիւսիս։

Ինչպէս Կոլա, նոյնպէս Բանջրոտ, Փենեք, Փանաղկերտ, Թաուսկեր, Բարդուզ եւ Օլթի ապրում է միեւնոյն իսլամացած հին ժողովուրդը, որոց բարքն ու վարքը չի տարբերւում Հայ ժողովրդի վարքից ու բարքից. միակ տարբերութիւնը կրօնն է. Հայերը իրենց աւանդական քրիստոնէութեան վրայ հաստատ մնացել են. իսկ իսլամացածները բարձի թող են արել կրօնը։ Պէտք է ասել, որ մինչեւ 1878 թ. պատերազմը եւ այդ դաւառի գրաւումը, իսլամացած ժողովուրդը երեք դարի ընթացքում ո՛չ միայն չէր կարողացել մարսել իսլամը, այլ ատում էր այդ կրօնը։ Ո՛չ միայն չէր լուացւում, չէր աղօթում, ծոմ չէր պահում, տօներ կատարում, այլ մինչեւ անգամ հայհոյում էր։ Ատելու-

---

տուած ապարանքումն էլ գործադրուած էր, մօտ 1000 թ. լազուրն ու ոսկեզօծումը, կասկած չկայ, որ 7—8 դար առաջ աւելի կատարելագործուածն ունէին Ցայեղիները։ Դեռ նոթաց ծանօթութիւնների մէջ յիշեցի, որ պղնձի հանքերից դուրս թափուած նիւթերի մէջ կան այնպիսի բաղադրութիւններ, որոնցից կարելի է հեռուցնել, որ լազուր էին պատրաստել տալիս եւ հարաւում ծախում էին Բագրատունիները։ Սրանց հարստութեան ամենամեծ աղբիւրը պիտի այդ վաճառականութիւնը լինի, որ նրանք գաղտնի էին պահում եւ միշտ գրամ-ոսկի ունէին գանձագնով նախարարների կալուածները գնելու։